



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎՈՒՄ

(1969 թ. հոկտեմբերի 2)

Մենք ուրախությամբ կատարեցինք բացումը այս սրբագույն արքայապետական ժողովին, և նույն ուրախությամբ այստեղ ենք հիմա, որպեսզի խոսք մը ևս ավելցնենք ժողովի փակման այս պահուն: Ժողովի բացման օրը, ստենապետներեն մեկը՝ Սերովբե արքեպիսկոպոս, այս ժողովը կոչեց պատմական: Համենայն դեպս, եպիսկոպոսաց այս ժողովը պատմական ըլլալու կոչված շրջանի մը սկզբնավորությունն է, մեր եկեղեցւո կյանքին մեջ: Գուցե առաջին անգամն է այս վերջին տասնամյակներուն, երբ այսքան մեծ թիվով բարձրաստիճան հոգևորականներ՝ պատրիարքներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, կաթողիկոսի շուրջ հավաքված, միասին աշխատեցան: Ուրիշ եկեղեցիներ շատնց արդեն որդեգրած են և կանոնական ձև տված են նման ժողովներու, մասնավանդ մեզի նման պատմական եկեղեցիները, թե՛ Արևմուտքի և թե՛ Արեւելքի մեջ:

Ծանոթ է ձեզի, թե տարակարծություններ կան այս հարցի շուրջ, թե եպիսկոպոսական ժողովներ գումարելու արդարացիություն կամ անհրաժեշտություն կա՞րդ յոք: Ոմանք, նույնիսկ ուզեցին տեսնել մեր մեջ ձգտում մը, աշխարհականները եկեղեցիի կյանքեն դուրս թողնելու և այլն: Անձնապես աշխարհականներու գործակցությունը մերժող անձ մը երբեք չենք եղած, տակավին Ռումանիո Մեր առաջնորդական շրջանեն սկսյալ: Այս տեսակետեն, ավանդաբար մեզի եկած դրությունը, պահելու լրիվ կողմնակից ենք, նույնիսկ սկզբունքով համաձայն ենք նախկին Թուրքիո ազգային սահմանադրության ժողովրդավար սկզբունքներուն, որոնցմէ պետք չէ հեռանալ ընդհանրապես: Սակայն, հատկապես զուտ եկեղեցաբանական և աստվածաբանական հարցերու ուսումնասիրության և քննարկման մեջ, անշուշտ եպիսկոպոսները իրենք միայն պետք է հավաքվին և եզրակացությանց հանգին և անկէ հետո

և, որ հայրապետական կանոնական տնօրինմամբ այդ հարցերը կրնան ներկայացվիլ ազգային-եկեղեցական ժողովներում, ուր կմասնակցին նաև աշխարհական ներկայացուցիչները մեր ժողովուրդին:

Այս ընթացումը կկարծենք ուղիղ է, և պատմական եկեղեցիներու ավանդությանց համապատասխան, և մասնավանդ իրապես այ անհրաժեշտ և օգտակար: Որով կկարծենք, թե այսպես, ինչպես սկսանք, պետք է շարունակենք և որդեգրենք այս աշխատանքի ձևը, մեր զուտ եկեղեցական, կրոնական հարցերը, միասնաբար քննարկելու, ուսումնասիրելու և եզրակացությանց հանգելու համար:

Արդ, Մենք կողջունենք այս ժողովը և աշխատանքը, որ կատարվեցավ: Զեկուցումները պատրաստված էին բավարար բարեխղճությամբ, ոմանք լավ ուսումնասիրված, ոմանք քիչ մը հապճեպ, բայց համեմայն դեպս բոլորը հիմք ծառայեցին, որպեսզի դուք կարողանաք կարծիքներու լայն փոխանակում կատարել և լուսաբանել հարցերը: Հետևաբար Մեր անկեղծ գնահատանքը կուղղվի ձեզի բոլորիդ, սիրեցյալ եղբայրներ: Մեր գնահատանքի խոսքը, հատկապես Մեր սրբազան պատրիարք եղբայրներուն՝ Երուսաղեմի և Կ. Պոլսո, որ հակառակ իրենց բազմազբաղ վիճակին և այլ և այլ հանգամանքներու, բնավ չվարանեցան պատասխանելու Մեր հրավերին, իրենց Աթոռներու ներկայությամբ առավել բարձրացնելու հեղինակությունը այս ժողովին: Մեր գոհունակության խոսքը կուղղենք նաև դիվանի երկու ատենապետ եղբայրներուն և ատենադպիրներուն, որոնք ձեռնհասությամբ և բարեխղճությամբ ղեկավարեցին ժողովի աշխատանքները: Ինչքան կարողացանք հաստատել, ժողովին ներկայացված հարցերու մեկ մասը կթվի թե սպառիչ կերպով լուսաբանվեցան և համապատասխան եզրակացությունները արձանագրվեցան, որոշ հարցեր այ մնացին, որ հետագային շարունակվի անոնց քննարկումը և մոտ ապագային եպիսկոպոսական նոր ժողովի մը ներկայացվին վերջնական եզրակացությանց հանգելու համար:

Կենթադրենք, թե երկու տարվա ընթացքին բոլոր հարցերը, պետք է վերջնական փուլի մեջ բերել իբրև բազմակողմանիորեն ուսումնասիրված հարցեր, որպեսզի հաջորդ եպիսկոպոսական ժողովին պատրաստ ըլլան վերջնական եզրակացությանց հանգելու:

Մեր եկեղեցվո ծոցին մեջ, մենք սկսանք բարեփոխումներ կատարելու մասին մտածել: Ինչպես ժողովական սրբազաններեն մեկը արտահայտվեցավ, մենք հետ մնացած ենք այդ տեսակետեն և պետք է աշխատենք կորսված ժամանակը շահելու և այն ինչ որ անհրաժեշտ է ի գործ դնենք, որպեսզի մեր եկեղեցին իր հին հմայքը, իր նվիրապետական-կանոնական կառուցվածքը պահելով հանդերձ, կարողանա արդի կյանքի որոշ պահանջներուն, իրական պահանջներուն գոհացում տալ, որովհետև, եթե բացարձակ պահանջողականության մը դիրքերու վրա մնանք ամեն տեսակետով, կխորհինք թե կյանքը մեզմե առաջ կանցնի և մեր եկեղեցին կրնա իրական կյանքեն դուրս մնալ: Սակայն, այս այսպես ըլլալով հանդերձ, բարեփոխումներու, վերանորոգումներու մեր ճիգին և ցանկության մեջ, մենք պետք է ցուցաբերենք նաև զգուշավորություն և ոչ անապարանք: Նաև մեր շուրջը նայինք և դիտենք մեր քույր եկեղեցիներու կեցվածքը և գործելակերպը նման հարցերու նկատմամբ: Ամեն նորություն, հառաջդիմություն չէ անշուշտ, նորություններ կան, որ հետադիմություն են, անկում են, և երբեմն նույնիսկ աչլասերում: Այս բոլորը Մենք ի մտի պետք է ունենանք և բաց ու իրատես աչքերով նայինք կյանքի երևույթներուն և մեր քույր եկեղեցիներու փորձին: Բայց մասնավանդ

ամեն բանն վեր պետք է դասենք մեր եկեղեցվոց ներքին միության և կարգապահության ամրապնդումը: Մեզ միացնող ուժերը՝ հոգևոր և բարոյական են, կաթողիկոսը այդ ուժերով կապված է եկեղեցվոց բոլոր մասերուն հետ: Մեր եկեղեցվոց մարմնի և նվիրապետության միության պահպանումը պետք է ըլլա մեր գերագույն մտասկեռումը: Մենք եպիսկոպոսներս հատկապես, պետք է արթուն հակիչներ ըլլանք՝ մեր ներքին միասնությունը և մեր ընդհանրական Հայրապետության հեղինակությունը պահպանելու, որովհետև Հայրապետության հեղինակությունը ձեզմե ամեն մեկիդ հեղինակությունն է անձնապես, ինչպես նաև ձեր բոլորիդ հեղինակությունը Մայր Աթոռիս հեղինակությունն է: Մենք անբաժանելի ենք մեկս մյուսեն:

Երկու խոսք այ Անթիլիասի հարցի վերաբերյալ:

Անձնապես զոհ ենք այն բանաձևով որ որդեգրեց այս ժողովը: Մայր Աթոռիս, և անձամբ Մեր մտածելակերպին համաձայն է այն: Հակառակ Մեր բազմաթիվ հուսախաբություններուն, այնուամենայնիվ, Մենք Մեր լավատեսությունը չենք ուզեր կորսնցնել: Համառ լավատեսության մը ճամփուն վրա կուզենք պահել Մենք զՄեզ հաստատ համոզումով, թե մեր հիմնական կեցվածքը ուղիղ է և արդար: Երկրորդ, Մեր խոր զգացումն է, որ մեր ամբողջ ժողովուրդը մեզ լավ կհասկնա և մեզի հետ է, նույնիսկ ինքզինքնին Մայր Աթոռեն բաժնված կարծիքներեն շատ-շատերը, նույնիսկ կուսակցական ղեկավարներ, որոնց հետ Մեր վերջին ճանապարհորդության ընթացքին Մենք մտերիմ հանդիպումներ ունեցանք, թե՛ Հյուսիսային և թե՛ Հարավային Ամերիկայի մեջ: Այդ շրջանակեն կարևոր ղեկավար անձնավորություն մը ըսավ՝ «Անթիլիասի մեջ նոր երարխիս մը կստեղծվի և այդ վտանգավոր է ոչ միայն հայ եկեղեցվոց, այլև հայ ժողովուրդի ապագայի համար»: Տավակին չենք խոսիլ լայն զանգվածներու մասին, բաժանյալներեն, որոնք այնքան հուզումով և գուցե առավել ջերմությամբ և ներքին խռովքով, կուզային Ամենայն Հայոց կաթողիկոսին Աջը առնելու կամ Անոր խոսքը լսելու: Որով իրականությունը արտահայտած կըլլանք, եթե ըսենք, թե մեր համայն ժողովուրդի խիղճը, դատաստանը, ի նպաստ Մայր Աթոռ ս. Էջմիածնին է: Ծանոթ է բոլորիս, թե որոշ մարդիկ Անթիլիասի ամերեն, կամ որոշ թերթեր՝ կքաղաքականացնեն մեր եկեղեցական հարցերը անխիղճ վերագրումներով Մայր Աթոռիս և մեզի հավատարիմներու հասցեին, իրենց անիրավ գործերուն արդարացում մը հորինելու ստիպումին տակ: Ակներև է արդեն այդ անազնիվ և հակազգային գործելակերպի սնանկությունը:

Կխորհիք թե Աստված և մեր ժողովուրդը մեզի պիտի օգնեն:

Վերջացնելու առաջ քիչ մը ևս ժամանակ կուզենք խել ձեզմե, խոսելու համար մեր ներքին կյանքի մասին այստեղ, Հայաստանի և մեր դրացի հանրապետություններու թեմերուն մեջ: Առաջին անգամ, 1945-ին, հանգուցյալ կաթողիկոսի ընտրության առթիվ Հայաստան եկանք բազում վերապահումներով: Այդ բոլորը հասկնալի է ձեզի: Այն ժամանակ երևույթներ, կացություններ տեսանք, որոնք Մեր սիրտը տխրեցուցին, նույնիսկ հուսալքումի հասցրնելու աստիճան: Եկեղեցական տեսակետով մասնավորապես:

Կհիշենք այդ շրջանին օր մը, այն ատեն վարդապետ Էինք, երբ Կյուրեղ պատրիարք և Կարապետ Գալֆայան բահահան, միասին ղեպի Գայանեի վանքը կերթային, ընկերակցեցանք անոնց: Գայանեն կիսավեր վիճակի մեջ, գերեզմանատունը չափազանց անմխիթար: Կյուրեղ պատրիարք ազդված այդ բոլորեն, բացականչություն մը ըրավ՝ «Այստեղ ամեն բան մեռեր է, անպաս է» և հոգևոր իմաստով գործածեց այդ բառը: Երբ կաթողիկոս պիտի

ընտրվեինք, նախօրյակին, հոգեպես տկար գտնվելով ուզեցինք խոսափիլ այդ ծանր լուծեն: Բայց հետո տակավ ամեն բան սկսավ կերպարանափոխվիլ և Մեր բոլոր տեսակի վերապահումները հալեցան, փարատեցան: Կարճ ժամանակ հետո տեսանք, որ իսկապես ընելիք գործ կա, միայն թե պետք է աշխատիլ, հավատք ունենալ, լավատես ըլլալ: Այս ձևով կարողացանք իրագործել այն, ինչ որ ծանոթ է ձեզի: Բայց ավելի կարևորը այն է, որ խորունկ կերպարանափոխում մը կատարվեցավ մեր ժողովուրդի հոգիին մեջ: Կթվեր, թե ասեմները, 1945 թվականին օրինակ, այստեղ մեր ժողովուրդը իր հոգին կորսնցուցած է կրոնական իմաստով, մասամբ նաև ազգային իմաստով: Բարեբախտաբար այդպես չէ եղեր: Մեր տեսածը մակերեսային է եղեր: Վերջին 10—15 տարիներու ընթացքին մեր պայմաններ ստեղծվելով, այն ինչ որ ներքնապես թաքնված էր, սկսավ հետզհետե բորբոքիլ և արտահայտվիլ: Մեր ժողովուրդի հոգևոր և ազգային ճշմարիտ դեմքը սկսավ պայծառանալ:

Գուցե ոմանք, արտասահմանի մեջ երբեմն կխորհին, թե Վազգեն կաթողիկոսը կամ Էջմիածնականները կչափազանցեն կամ կուզեն ցույց տալ տավելի քան որ է: Իրականությունը այն է, որ մենք ավելի քիչը ցույց կուտանք, քան թե իրականությունն է: Մեր ժողովուրդը ճշմարտապես հոգևոր վերածնունդ կապրի այսօր: Հավատքի ծարավը կծավալի, կբորբոքի աննախատեսելի չափերով:

Ձեզի ուրախությամբ կվկայենք, թե այստեղ հոգևոր աշխատանքի ապարեզ կա և Մենք Մեր տկար ուժերով պիտի աշխատինք բավարարել մեր ժողովուրդի պահանջքը: Եվ Մեզի համար հոգևոր տառապանք մըն է, որ այսպիսի պայմաններուն մեջ կգտնվին որոշ քահանաներ Երևանեն, որոնք կուզեն լքել իրենց ժողովուրդը, իբրև դասալիքներ կփորձեն փախչիլ արտասահման, չգիտենք ուր, պաշտոն գտնելու համար: Մենք որոշած ենք վճռականապես կարգալուծ ընել զանոնք, անշուշտ ամեն համոզելու ձևերը օգտագործելն հետո: Հայ հոգևորականը չի կրնար Հայաստանի ժողովուրդը լքել և փախչիլ այստեղեն: Եվ ոչ ոք պետք չէ զանոնք քաջալերե:

Մեր հիմնական առաքելություններեն մեկն է հնարավոր չափով աշխատանք ծավալել ի շինություն հոգևոր կյանքի Հայաստանի և դրսցի երկիրներուն մեջ, զորացնել եկեղեցին այստեղ և նվիրյալ հոգևորականներ պատրաստել ի մխիթարություն մեր հայրենաբնակ ժողովուրդին:

Մենք արդեն Մեր ըսելիքները վերջացուցինք: Կրկին Մեր գոհունակությունը կհայտնենք և Մեր սրտեն բխած ամեն բարի մաղթանք կուղղենք ձեզի բոլորիդ: Աստված զմեզ բոլորս, պահե պահպանե Իր սուրբ հովանիին տակ, քաջառողջ, արի և արթուն: Թող Մեզմե ամեն մեկը իր տեղը, իր պարտականությունը կատարե խղճի մտոք, մեր հոգևոր և ազգային շահերու գիտակցությամբ:

Թող Աստված օրհնե մեր սուրբ եկեղեցին և մեր սուրբ առաքելությունը ամեն:





ВСТРЕЧА НА ПЛОЩАДИ ПЕРЕД ЦЕРКОВЬЮ В ТУШИНЕ